6 ОКТ. 1893 ПОЧТ. ТЕЛ. КОНТ.

ՆՈՐ-ԴԱՐ

№ 179 ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, Հինգշաբթի, 14 Հոկտեմբերի 1893 Հինգշաբթի, 14 Հոկտեմբերի ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 179

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 րուբլի 50 կոպ.
Թիֆլիսում՝ ամիսը՝ 1 րուբլի, հատոյ 5 կոպէկ։
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը
Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների տողին 2 կոպ., ռեկլամների համար կրկնապատիկ։

Ներկայացում 6. Բաժանորդագրութեան 3.

Հայկական ներկայացումներ.

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, հոկտեմբերի 14-ին, հայ դրամատիկական խումբը մասնակցութեամբ

ՏԻԿ. ՀՐԱՉԵԱՅԻ

կըներկայացնէ առաջին անգամ

«ՄՈԼԵՇՐՋԻԿ ԿՐԱԿՆԵՐ»

Դրամա 5 գործ., հեղ. ԱՆՏՐՈՊՈՎԻ, թարգմ. ա. ՇԱՀԲԱԶԵԱՆԻ։

Լիդիայի դերը կըկատարէ տիկ. ՀՐԱՉԵԱՆ.

II.

200,000

Վոդ. 1 գործ., հեղ. ՓԱՌՆԱԿԻՍԻ

Սկիզբն է երեկոյեան 8 ժամին։

Անտրակտներում կընուագէ օպերային երաժշտական խումբը պ. Պողենի առաջնորդութեամբ։

Տոմսակները վաճառւում են թատրոնի կասսայում.

ԱԶԴ.—Պատրաստւում են մի շարք նոր պիեսներ՝ «Աբրայո», «Բեռթրնա», «Ով է մեղաւորը», «Ամուսիններ», «Հայրենիք» և այլն։

(491) 2—2.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Սարգիս եպիսկոպոսը ճեմարանի տեսուչ։ Սինոդի յանձնարարութիւնների պաշտօնեայ Էջմիածնից։ Աչքեան պատրիարքը Էջմիածնից։ Հայագէտ պրոֆեսոր Կարիէր։ Գործարաններ Պարսկաստանում։ Այս տարուայ զինուորակոչը։ Կալադէ գիւղում պատահած թշուառութիւնը։ Մերվից։
Արտասահմանի հայ թերթերից։
Հայոց Հայրիկի խօսքերը ս. Էջմիածնի մասին 32 տարի առաջ։
Նաւթ արդիւնաբերողների համագումարը։
† Շարլ Գունօ.
Թղթակցութիւններ.—Վարդաշէն։
Քաղաքական.—Գերմանական խաղաղասէրների միութեան հրաւէրը։
Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
Հեռագիրներ։
Բանասիրական.—Բրըջբէյից-Շիքագօ։
Տեղեկատու.
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

ԷՋՄԻԱԾՆԻՑ հեռ. 13-ին հեռագրում են մեզ. Վեհափառ Կաթողիկոսը ճեմարանի ռեկտոր նշանակեց սինոդի անդամ գեր. Սարգիս եպիսկոպոս Տէր-Գասպարեանցին։

—

Կովկասի պ. կառավարչապետի սոյն 1893 թուի հոկտեմբերի 8-ի հրամանով պաշտօնաթող նահանգական քարտուղար Նիկողայոս Հախումեանը, նորից ծառայութեան մէջ ընդունելով, նշանակւում է Էջմիածնի սինոդի առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ.—Կարա-Մուրզայի արձակուելուց յետոյ նրա տեղը ճեմարանում երգեցողութեան ուսուցիչ նշանակուեց Հայաստանեայց Եկեղեցու հաւաքաւ դասակ՝ շնորհունակ Սողոմոն սարկաւագը։

—«Արարատ»-ի խմբագրութիւնը նոր կազմակերպութիւն կըստանայ, որով նա վերստին կըդառնայ Էջմիածնի միաբանութեան բերան։

—

Ինչպէս յայտնի է, Աչքեան Խորէն պատրիարքը Նովայի ջերմուկներն էր գնացել իւր անձնական ակարութիւնը «դարմանելու» համար, սուլթանից դրա համար յատուկ դրամ ստանալով։

Այժմ, ինչպէս իմանում ենք «Արևելքից», Աչքեան պատրիարքն այս օրերս արդէն վերադարձել է ջերմուկներից Կ. Պոլիս նորանոր գործերի համար, երևի, բաւական ույժ հաւաքած։

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են, որ հոկտեմբերի 9-ին հանդիսաւոր կերպով տօնուել է Գէորգեան ճեմարանի տարեդարձը։

—

Առաջիկայ տարի, գարնանը, Կովկաս է գալու յայտնի հայագէտ պրոֆեսոր Ա. Կարիէրը, որ մտադիր է այցելել նաև ս. Էջմիածին, նպատակ ունենալով ուսումնասիրելու այնտեղի մատենադարանի հին հայերէն ձեռագրերը։ Ի դէպ պիտի ասած, որ այս օրերս Պարիզում լոյս է տեսել պ. Կարիէրի նոր ուսումնասիրութիւնը Մովսէս Խորենացու մասին «Nouvelles saurces de Moisede Khoren» վերնագրով։

—

Ռուս-Բելգիական ընկերութիւնը Պարսկաստանում լուցկու գործարան է բաց անում։ Այնուհետև նոյն ընկերութիւնը մտադիր է դարձեալ Պարսկաստանում շաքարի և թղթի գործարաններ բանալ։

—

1872 թուին ծնուած և այս տարի զինուորութեան կոչուող երիտասարդների ընդունելութիւնը սկսուելու է հոկտեմբերի 15-ից Թիֆլիսի զինուորագրական ատեանում։

—

«Нов. Об.»-ից քաղելով, երէկ հաղորդեցինք Գեօկչայի գաւառում գտնուած Կալադէ գիւղին պատահած սարսափելի թշուառութիւնը, այն է՝ թէ ինչպէս այդ ամբողջ գիւղը հրոյ ճարակ էր դարձել։

Այժմ «Արձագանքը» հաղորդում է, որ Կալադէ գիւղն ունի 1649 բնակիչ (894 այր և 755 կին) և բաղկացած է 298 ծխից։ Գիւղի բոլոր բնակիչներն էլ հայ են։

—

ՄԵՐՎԻՑ (Անդրկասպ. երկիր).—Ամառային տօթերից սթափուած Մերվի հայ վաճառականներն արդէն մի շաբաթ է որ պատրաստւում են հասարակական դահլիճում ներկայացում տալու։ Պարոնները ամենայն ձիգ թափում են՝ աշխատելով աջող դուրս բերել սկսած գործը այն բարի նախանձից դրդուած, որ յուլիս ամսի 3-ին տրուած գործակատարների ներկայացումը շատ աջող ելք ունեցաւ. հայ վաճառականները մինչև անգամ ցանկանում են, որ իրենց ներկայացումը գերազանցի առաջինից. այդ իսկ նպատակով ոչ մի գործակատարի չեն թողնում, որ իրենց գործին մասնակցի։ Լաւ կլինի, եթէ մեր յարգելի հայ վաճառականները ըստ «Նոր-Դար»-ի առաջարկութեան ս. Էջմիածնում հիմնելիք «Լուսաւորչի լումային» յատկացնեն իրենց բարենպատակ ներկայացման արդիւնքը։ Դրանով նրանք առաջին օրինակը կըհանդիսանան այդ օգտաւէտ գործում։

—

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

—Բերայի Նարեկեան վարժարանին տեղ՝ Ազն. Նշանեան եղբարց բարերարութեամբ կառուցանելի վարժարանին հիմնարկէքը տեղի ունեցաւ այս առաւօտ (սեպտ. 19-ին ժամ 4-ին)։ Վարժարանը պիտի բաղկանայ երկու շէնքերէ, անջրպետով մը բաժնուած, որոց աջակողմեանը մանչերու ու ձախակողմեանն՝ աղջկանց համար։ Շէնքը պիտի ըլլայ քարուկիր, և չորս յարկով։ Վարժարանին յատկացուած գետնին լայնութիւնն է 13 մեթր ու երկայնութիւնը 40 մեթր։

—Ս. Յարութիւն եկեղեցւոյ հիմնարկէքը տեղի պիտի ունենայ քանի մը շաբթէն, հանդիսաւոր արարողութեամբ, որուն պիտի նախագահէ ս. պատրիարք հայրն և պիտի հրաւիրուին բարձրաստիճան եկեղեցականք ու աշխարհականք։ Վարժարանին կառուցումը փութացնելու համար, հարկ դատուած էր հիմնարկէքը կատարել այսօր, (սեպտ. 20-ին) առանց հանդէսի։

—Խառն Ժողովն յանձնախումբ մը կազմած էր Կրետէի մէջ գտնուած հայոց եկեղեցւոյն սեպհական կալուածոց մատակարարութեանը համար և առ այդ կանոնագիր մը պատրաստած էր։ Արդ, այդ կանոնագիրը հաղորդուելով յանձնախմբին, անոր անդամներն հրաւիրուած են գործի ձեռնարկելու։ Խառն Ժողովոյ որոշմամբ՝ Գարթալի արժ. Մանուէլ քահանան ի մօտոյ Կրետէ պիտի ուղևորի՝ պաշտօն ունենալով տեղւոյն եկեղեցին պայծառ պահել, կալուածոց մատակարարութիւնը կատարել և միանգամայն հոգևորապէս մխիթարել այն ազգայիններն, որք կը գտնուին օսմ. կայս. կառավարութեան իշխանութեանը ներքև եղած շրջակայ կղզիներու մէջ։

—Բ. Դուռն հրամայած էր որ Պարսկաստանի մէջ բնակող օսմ. հպատակներ Էնտաֆի տուրքն հատուցանեն ուրիշ օտարահպատակաց յար և նման եղանակաւ, Թուրքիոյ մէջ բնակող պարսկական հպատակներն ևս փոխադարձաբար նոյն տրամադրութեան ենթարկուելու պայմանաւ։ Ըստ այսմ, Պարսկաստանի հիւպատոսներուն հրահանգ ղրկուած էր։ Արդ, Թեհրանի օսմ. դեսպանատան կողմէ իմաց տրուած ըլլալով թէ Ռուսիա իւր հպատակաց մասին նոյն տրամադրութիւնն ընդունած է այն պայմանաւ միայն, որ տուրք վճարողներուն և տրոց հաւաքիչներուն միջև ծագած ամեն վէճեր ռուսական հիւպատոսական դատարանաց առջև տեսնուին, Բ. Դուռն ևս, ինչպէս կը հաստատէ [illegible], հրաման ղրկած է ի Թեհրան, որպէսզի նոյն տրամադրութիւն օսմ. հպատակաց մասին ևս գործադրուի, այսինքն՝ օսմ. հիւպատոսական դատարանին առջև քննուին ամեն վէճք, որք կրնան ծագիլ տրոց հաւաքիչներու և օսմ. հպատակներու միջև։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲՐԸՋԲԷՅԻՑ-ՇԻՔԱԳՕ

ՆԱՄԱԿՆԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԻՑ

ԺԲ.

Բրըջբէյը մի ամարանոց է Քանադայի հարաւային սահմանում, Մեմփամեգոգ չքնաղ լճի ափին։ Մեծ չէ այս ամարանոցը. հազիւ կէս վերստ շրջապատ ունենայ։ Նա պատկանում է մի ընտանիքի. և միայն այդ ընտանիքն ու իրենց մերձաւորներն են ամառ գալիս այստեղ։ Տասներկու վրան, մի խոհանոց-վրան և մի խրճիթ կամ, եթէ կուզէք անուանել, մի սրահ։ Մօտն ուրիշ ամարանոցներ ևս կան, բայց այն հեռաւորութեան վրայ, որ Բրըջբէյի միայնութիւնը չեն խանգարում։ Խիտ անտառը և բլրակները բաժանում են միմեանցից այս փոքրիկ «եայլաղ»ները։

Ինչպէս թէ «եայլաղ»։ Նոյնպէս գնում են Հայաստանում, այն էլ միայն քրդերը, թափառական թուրքերը և խաշնարած հայերը. իսկ քաղաքացիները գնում են «դաչաներ», պատուական, քաղաքավարի ամարանոցներ, ուր ամեն վայելչութիւններ կան ամարանոցին քաղաքի կերպարանք տալու համար.—լայն խճուղիներ, երկձի փայտոններ, հանրակառքեր, կլուբ, պարահանդէսի սրահ, երաժշտական խումբ, որ շաբաթը մի քանի անգամ նուագում է՝ թրթռացնելով մատաղ երիտասարդների և ուհիների սրտերը, որոնք պարում են անդադրում, սեղմուած կորսետի մէջ, որ, ամերիկեան մի ճարպիկ վաճառականի ասելով, «աւելի լաւ է սեղմում իրանը, քան հարազատ եղբայրը». պարում են և յոգնած, ուժասպառ տուն դառնում գիշերուայ երկուսին, առաւօտը վեր կենում ժամը տասին, անկողնում թէյ խմում, «կաթնով, բուլկով, սուխարով», յետոյ, ախպերներին, կոտրատելով ասում. «Փոքր դաչա էինք գնացել, դուք ուր էիք»։

—Գիւղում։—Ո՜հ, գիւղում ապրել կըլինի՜։

Հապա, միթէ կարելի է գիւղում ապրել ամառը, ուր ոչ մի վայելչութիւն չկայ։ Ամեն բան մեր ամարանոցներում այնքան արհեստական է, որքան և քաղաքներում, սկսած օսլայած շապիկից մինչև պարահանդէսներն ու փոխադարձ «վիզիտները»։ Ամարանոցի կեանքը կազմում է անընդհատ շարունակութիւնը քաղաքային տաղտկալի կեանքի։ Զանազանութիւնը միայն Կովկասեան լեռների աննման բնութիւն է, տեղը, օդը և ջուրը, որոնք սակայն վայելել չգիտեն մեր երկրում։

Բայց ամերիկացին գիտէ վայելել իւր երկրի գեղեցիկ բնութիւնը։ Ինքը, տասն ամիս լարուած աշխատանքից յետոյ՝ նա գնում է մի երկու ամիս ամարանոցում անցկացնելու։ Եւ այս ժամանակը նա գործ է դնում այնպէս խելացի կերպով, որ ետ է դառնում կազդուրուած՝ նորից սկսելու համար սովորական աշխատանքը։ Խիստ հետաքրքիր է մեզ, արևելցիներիս համար թէ ինչպէս են անցկացնում ամերիկացիներն ամառուայ ամիսներն ամարանոցում։ Ըստ երևոյթին ամերիկացիները, նիւթական քաղաքակրթութեան քաղաքացիները, պէտք է որ շատ շքեղ ապրում լինէին ամարանոցներում, ինչպէս քաղաքներում։ Ոչ։ Կրթուած ամերիկացին ամառն անց է կացնում մեր գիւղացու պէս, բնութեան մէջ և նրա հետ. պարզ կեանքով, աշխատելով իւր ձեռքերով որպէս գիւղացի և մշակ։

Բրըջբէյ ամարանոցն Ամերիկայի առաջնակարգ ամարանոցներից մինն է։ Ամեն տարի լրագիրները գովեստներ են գրում նրա մասին։ Բանաստեղծներն երգել են այն. վիպասանները վէպեր են գրել նրա կեանքից։ Բայց նա նշոյլը չունի մեր երկրի ամարանոցների շքեղութիւնից։ Նշանաւորը և հազուագիւտն այստեղ այն ոգին է, որ իշխում է ամարանոցի փոքրիկ հասարակակցութեան մէջ.—պարզութիւն, բնականութիւն, հաւասարութիւն և ջանասիրութիւն։ Պրոֆեսորներ, խմբագիրներ, բանաստեղծներ և նշանաւոր գրական անձեր են կազմում Բրըջբէյի սարուորները, բայց ոչ տղախին ունեն կերակուր եփելու, ոչ ծառայ ծառայութիւններ կատարելու համար։ Խոհարարը մի աղջիկն է բարձր կրթութեան տէր, լեզուագէտ և խմբագիր։ Ոչ մի լորդ աւելի գերազանց խոհարար չունի, քան Բրըջբէյ ամարանոցը։ Նա վեր է կենում առաւօտեան հինգին կամ չորս ու կէսին, երբ սարուորներից դեռ ոչ մէկը տեղից չի շարժուել. գրում է խմբագրական յօդուածներ և մասնաւոր թղթակցութիւններ, որ ամփոփւում են Եւրոպիայից, Հնդկաստանից, Արաբիայից սկսած մինչև Ամերիկա։ Յետոյ նա գոգնոցը կապում է և կերակուրի ետևից կենում։ Քսան ու հինգ հոգու համար կերակուր պիտի պատրաստի. հեշտ բան է։ Գիտէք ինչ ասել է «ամարանոցի ախորժակ»։ Ջուրը կրում են, ամանները լուանում են, վրանները և դահլիճը սրբում են իրենք սարուորները օրապահութեան կարգով, հաւասարապէս կին թէ մարդ։ Ի՞նչքան կըզարհուրեն մեր երկրի գիմնազիստները, տեսնելով պրոֆեսորներին գոգնոցը կապած թևերը վեր քաշած՝ ամաններ լուանալիս, կամ աւելը ձեռքին խրճիթը սրբելիս, կամ միլիոնատէրի աղջկան աղբիւրից կամ լճակից ջուր կրելիս։

Յիշում եմ թէ ինչպէս մի անգամ իմ հայրենի քաղաքում մի հայր փողոցում առնում է երկու կապուկ կանաչի և խնդրում իննամեայ գիմնազիստ որդուն, որ տուն տանի. տունը քառորդ վերստ հեռու է, բայց համազգեստի փայլուն կոճակներով ազնիւ աղան մերժում է կապուկները ձեռքն առնել։

Ամօթ չէ. տեսնողներն ինչ կասեն։ Հայրը գնում է մի թերթ սպիտակ թուղթ, քաղաքավարի կերպով փաթաթում կանաչին, այնպէս որ տեսնողները կարողանան կարծել, թէ այդ կապոցը կամ գրական առարկաներ են կամ մետաքսի գործուածքներ, և ոչ թէ երկու գրոշանոց կանաչի։ Որդին համաձայնում է, հարկաւ ոչ փոքր զոհողութեամբ, տուն հասցնել կապոցը։

Աշխատանքն ամօթ չէ կրթուած ամերիկացու համար, այլ պէտք և օրհնութիւն։ Ինչ որ ես իմ ձեռքով անել

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԻ ԽՕՍՔԵՐԸ Ս. ԷՋՄԻԱԾԻՆԻ ՄԱՍԻՆ

32 տարի առաջ.

Ս. Էջմիածնի լուսաւորչեան գահը ցնծում է այսօր իւր արժանաւոր գահակալի ներքոյ։ Այդ գահակալը Հայրիկն է, որ դեռ տասնեակ տարիներ առաջ ժողովրդի ուշքն ու միտքը գրաւել էր։ Արտասուքի ականջ ենք դնում Նրա խօսքերին, նայելով չենք կշտանում և լսելուց չենք յագնում. սակայն կարդալով էլ չպիտի ձանձրանանք։ Հայրիկը արձանագրած ունի և իւր գաղափարները։

Ով չգիտէ, որ եթէ մէկ կարդացող չէ կարդացել «Դրախտի Ընտանիքը», «Սիրաք և Սամուէլ», նա ոչինչ չէ կարդացել իսկապէս, նա ընթերցանութեան համ չէ առել։ Սակայն Հայրիկի այժմեան քարոզները լսողը, պէտք է մտքով անցնէ մի անգամ և Նրա անցեալ քարոզներից գոնէ այն, որ վերաբերում է Ս. Էջմիածնին, Հայոց ազգին և Եկեղեցուն։

Այդ նշանաւոր յօդուածը տպուած է «Արծուի Վասպուրականի» անման ամսագրի մէջ, որը դժբախտաբար այժմ հազուագիւտ է։ Արդ ծաղկաքաղ անենք այդ մի յօդուածը՝ գաղափար տալու համար ընթերցողին և ընդլայնելու համար Նրա դատողութեան բովը։

Այնտեղ Հայրիկը յանդգնութիւն է համարում իւր դատողութիւնը յայտնելու, որովհետև դատողութեան առարկան մի հսկայ է—այն է Հայաստանեայց Մայր Եկեղեցին—ս. Էջմիածինը։ Սակայն Նա իւր համեստութիւնը խախտած չէ համարում սրտանց բերելով որ՝

«Ճշմարտութեան ձայն կոխ չէ, կիրք չէ, աղաղակ չէ. որոյ ձայնին չափ կրդնէ Աւետարան թէ «մի ոք լուիցէ արտաքոյ զբարբառ Նորա»։ Ճշմարտութեան միրտը զգուշութեամբ պէտք է շարժել, որպէս զի տակյծեալ ճրագին պատրոյգին ծայր կտրելու ժամանակը խապառ չշիջուցանէ։ Այս է ճշմարտութեան պայման կամ յատկութիւն և չափ լեզուի»։

Ճշմարտութեան համար իւր բերանը բանալով, բարբառում է աւետարանի անձնուէր աշակերտը և ազգի անկեալ հարստութիւնը դիտելով, ասում է.

«Աստուծոյ Նախախնամութիւնը չահեց Նրա համար մի գերագոյն հոգեւորական փառքը, այսինքն ս. Գրիգորի հայրապետական գաւազանին սրբազան չառաւիղը։ Վաղանցիկ մարմնոյն փառքերը Այրարատայ սահմանէն չունեցին կամ խոպան մեռելութեան գերեզմանին մէջ թաղուեցան, բայց հոգւոյ փառք դեռ կենդանի կայ. որչափ հոգին առաւել է քան զմարմին, նոյնչափ գերազանց է հոգւոյն փառքը մարմնոյն փառքերէն։ Այս շնորհք մեծ է Հայոց ազգին, երանի թէ մշտնջենաւոր և անմահ լինէր։ Այո, Աստուած պիտի մշտընջենաւորէ Հայոց համար այս փառքը ս. Գրիգորին և Ներսեսին աղօթիւքը, ինչպէս 1,500 տարիէն մինչև ցարդ կըմշտնջենաւոր է։

«Էջմիածինը բոլոր Հայերուն համար սիրտ ու կենդանութեան հոգին է. սրտի բոլոր արեան շրջաններուն կեդրոնական տեղին է. սրտին հետ կապած ու միացած են բոլոր երակներուն ճիւղերը. այս սրտէն պէտք է արիւններ խաղան ու վազեն Հայոց ցամքած երակներուն մէջը...»։

Հայրիկը տեսնում է, որ ս. Էջմիածինը սիրտն է ազգի, նա է ազգի յառաջադիմութեան կեդրոնը, սակայն յառաջադիմութիւնը չէ ընթանում, ինչո՞ւ, պատճառը։

«Եթէ այսպէս աղաղակենք՝ սահմանադրութիւն, սահմանադրութիւն, օրէնք, օրէնք, բարեկարգութիւն, բարեկարգութիւն, և անոր ամենայն ինչ կատարեալ է. ազգային յառաջադիմութեան կառք վազելով առաջ կ'երթայ»։

Դրա հետ պէտք է միացնել և այն, որ հայրապետի ոյժն առաջ չի գնալ, եթէ Նրա հոգուն հետ միացած չլինի միաբանութեան հոգին. մի բան, որ երազների շրջանին է յատկանիշ մինչ օրս։

«Համոզուցեալ Ներսէս սրբազանը, կարծեմ թէ այս մասին համար միշտ ողբաց, մինչև գերեզման մտաւ, ինչպէս կըպատմեն իւր կենդանի մտերիմները, թէ տաս տարուան իշխանութեան միջոցը որչափ աշխատեց, չկարողացաւ միաբանութեան հոգին իւր վեհ հոգւոյն հետ միացնել։ Այս սրտառուչ գանգատները կըլսուէին միշտ իւր բերնէն թէ «ճնճղուկի մի նման միայն մնացեր եմ Էջմիածնայ տանիքին վրայ»։ Թէպէտ ծեր՝ բայց երիտասարդ սրտեռանդ հոգին կըվառէր. կուզէր հինաւուրց կորդացած Այրարատայ դաշտը հերկել աշխոյժ եզան պէս՝ հայրապետական լուծը պարանոցին վրայ առած, միակողմանի դժուարութեամբ կըքաշէր արօրը. մահ, միաբանութեան հոգին հաւասարաքայլ ամոլին լուծը իւր վզէն կըձգէր միշտ։ Այսպէս միայնակ հեծելով քըրտնելով՝ քաշեց մինչև վերջին շունչը»։

Հայրիկ միաբանութիւն է քարոզում. Հայրիկ միաբան հոգի է ներշնչում ամենքի սրտի մէջ և միայն խոպանացած և կորդացած սրտերն են փակուած երկաթէ դռներով այդ սուրբ ներշնչման առաջ։ Թող թաւալին թանձրացած սրտերը, բայց և այնպէս Հայրիկ վեհաբար ասում է.

«Թող Պոլսոյ Վոսփորէն և Տփխիսոյ Կուր գետի եզերքէն, Պարսկաստանի և Հնդկաստանի ծոցէն ելնեն Հայոց իշխանները և Այրարատ դիմեն. ս. Էջմիածնայ դուռը հասնելով բարեւեն իբարու և ձեռք ձեռքի տան ի նշան միութեան հոգւոյն. այնպէս ներս մըտնեն համբուրեն Հայրապետի սուրբ Աջը, նստեն և հայրենեաց շինութեան համար խորհուրդներ խորհին»։

Ո՞յք են Հայրիկի ճշմարիտ սիրողները. ո՞յք են Հայրիկեանները, նրանք պէտք է լսեն այս սուրբ ձայնը.

«Եթէ կըսիրէք ազգային յառաջադիմութիւնը, յառաջ մատիք ու լծուեցէք եկեղեցական, աշխարհական ի միասին. կըտեսնաք ձեր աչքով ու փորձով, թէ ինչպէս խոր կըվարէ և առաջ կերթայ մեր Վեհ. Հայրապետին սրբազան արօրը։ Այլ այսուհետև հեռու տեղերէն լոկ բերանի բամբասանքով չափել ձեւել աւելորդ է. երկպառակութեամբ ճեղքուած ազգային միութեան հանդերձը կարելու ճար տեսնանք»։

Այս խօսքերի 32 տարի առաջ բարբառողը Հայրիկն է. այն Հայրիկը, որ այսօր նստած ս. Էջմիածնի լուսաւորչեան վեհապանծ Գահի վրայ՝ մի ձեռքն է առել աւետարանը, միւս ձեռքը՝ գաւազան և կրծքին կրում է Քրիստոսի քաղցր խաչը։

Ա. Տէր-Միքէլեան։

Ս. Էջմիածին։

ՆԱՒԹ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Համագումարի երրորդ նիստում քննուեցին նաւթագործարանատէրերի ընկերութեան ծրագրի հետևեալ հիմնական կէտերը։

1) Ընկերութիւնը կազմւում է բացառապէս վաճառելու արտասահմանում կերոսինը։

2) Ընկերութեան մէջ մտնող բոլոր գործարանների կերոսինը լցւում է ընդհանուր աւազանների մէջ։

3) Արտասահմանի բոլոր վաճառանոցներում նաւթը վաճառելու համար գործարանատէրերն իրենց միջից գործակալներ և առանձին մասնաժողովներ են ընտրում։

4) Ընկերութեան նպատակն է արտասահմանեան իւրաքանչիւր վաճառանոցում կանոնաւորել կերոսինի վաճառումը, ճանապարհածախսն էժանացնել և ամերիկացիների հետ համաձայնութեան գալ ռուս և ամերիկական ապրանքի միջև համաշխարհային վաճառանոցը բաժանելու վերաբերմամբ։

Այդ բոլորի կատարումը յանձնւում է ընկերութեան գործակալներին (այդ պաշտօնը կատարելու համար, ինչպէս երևում է նիստի ժամանակ եղած հակաճառութիւնից, առաջուց արդէն ի նկատի կան եղբ. Նոբէլների և Կասպից-Սև ծովի ընկերութիւնները), իսկ ընկերութեան մասնաժողովի դերը բացառապէս լինելու է վերահսկող և ստուգող, այսինքն այդ մասնաժողովը պէտք է

ա) արտասահման ուղարկուող կերոսինի ընդհանուր որակը որոշէ,

բ) անդամների մասնակցութիւնն ընդհանուր վաճառման մէջ որոշէ,

գ) գործակալների գործունէութեան և հաշիւների կանոնաւոր լինելը ստուգէ,

դ) գործակալների գործառնութիւնների ծախսերը որոշէ և ստուգէ,

ե) ինչպէս գործարանատէրերի, այնպէս և գործակալների կողմից եղած պարտաւորութիւնների ճիշտ կատարմանը վերահսկէ,

զ) ընկերութեան անդամների հետ հաշիւ տեսնէ, գործակալների տարեկան հաշիւները ստուգէ, ընդհանուր ժողովներ գումարէ, պետական հաստատութիւնների հետ յարաբերութիւններ ունենայ և այլն։

Ամենից շատ հակաճառութիւնների առարկայ դարձաւ այն խնդիրը, թէ ամերիկացիների հետ ո՞վ պիտի պայմանագիր հաստատի՝ ընկերութիւնը, թէ վերաստուգիչ մասնաժողովը։ Որովհետև արտասահմանեան վաճառանոցին կերոսին մատակարարող Բագուի գործարանատէրերի և ամերիկական Standard Oil C-ie-ի միջև յիշեալ վաճառանոցը բաժանելու համար հաստատելիք պայմանագիրը կը պահանջէ խոշոր տուգանքներ տալ, ուստի նիստի մէջ կասկած յայտնուեց այն մասին, թէ Standard Oil C-ie-ն չի համաձայնիլ գործ ունենալ ամբողջ ընկերութեան հետ, այսինքն հարիւրաւոր գործարանատէրերի հետ. մէկ հոգուց չէ, այլ ամբողջ հարիւրաւոր անձերից տուգանք պահանջելը ոչոքի չի կարող ցանկալի լինել։ Այդ ի նկատի ունենալով, շատերն այն կարծիքն յայտնեցին, որ պայման կապելու գործը պէտք է յանձնել ընկերութեան գործակալներին, բայց այստեղ նոր հարց առաջ եկաւ. ընկերութեան գործակալները, օրինակ եղբ. Նոբէլների և Կասպից—Սև ծովի ընկերութիւնները, «Standard Oil C-ie»-ի հետ պայմանագիր հաստատելով, Նրա ճիշտ կատարման համար պէտք է պատասխանատու լինին իրենց բոլոր կայքով, մինչդեռ պայմանագիրը խախտել կարող է ընկերութեան մի որևէ անդամ միայն, որից շատ բան չես կարող իբրև տուգանք առնել. կամ մինչև անգամ ընկերութեան անդամը չի լինիլ միայն պայմանագրի խախտողը, այլ և [illegible] կարող է լինել մի որևէ բոլորովին կողմնակի գործարանատէր։

Այդ բոլոր կասկածները մասամբ փարատուեցան այն բանով, որ նիստի մէջ խօսուեցաւ այն մասին, թէ՝ մի անգամ որ ընկերութեան և ամերիկական Standard-ի միջև լինելիք պայմանագիրը սանկցիա կըստանայ և կըհաստատուի ֆինանսների մինիստրի կողմից, ապա վերջինս միշտ կարող է ռուսաց գործարանատէրերին ստիպել, որ պայմանագիրը ճշտիւ կատարեն։ Այդ նկատմամբ, դուցէ, հարկաւոր էլ չլինեն ուրիշ ապահովումներ։

Նիստում որոշուեց պայմանագիրը կապելու գործը յանձնել ընկերութեան առանձին հաւատարմատարներին։

Ժողովը վերջացաւ 6 գործարանատէր ընտրելով, որոնք վերջնականապէս պիտի մշակեն այն պայմանագիրը, որ կազմուած պիտի լինի համագումարի մէջ արած նկատողութիւնների համաձայն և որին յետոյ կըստորագրեն ընկերութեան բոլոր անդամները։

† ՇԱՐԼ ԳՈՒՆՈ

Հեռագիրը հոկտեմբերի 5-ին Պարիզից հաղորդեց մեզ հռչակաւոր երաժշտագէտ Շարլ Գունոյի մահը։ Հանգուցեալն անշուշտ Ֆրանսիայի երաժշտական աշխարհում ժամանակակիցների մէջ ամենահանճարեղ երաժըշտագէտն էր։ Նա մի ամբողջ ուղղութիւն է ստեղծել և ունեցել է այնպիսի աշակերտներ, որպիսիք են յայտնի Բիզէն, Սեն-Սանսը, Մասնեէն, Դելիբը։ Թէ ո՛ր աստիճան մեծ էր Գունոյի հանճարը, երևում է այն բանից, որ երաժըշտական լուրջ կրիտիկան այժմ արդէն Նրան կլասիկ է համարում։ Նրա անունը յայտնի է ամբողջ երաժշտական

կարող եմ, ինչու ուրիշին դիմեմ—այս պարզ տրամաբանութեանն է հետևում ամեն ամերիկացի, մեծ թէ փոքր, կրթուած թէ քիչ կրթուած։ Բայց չպիտի կարծել թէ ամարանոցում էլ ուրիշ աշխատանք չունեին սարուորները։

Ծառայական գործը վերջացնելուց յետոյ դրական աշխատանքով են պարապում։ Բրըչբէյ ամարանոցը մի դըպրոց է նաև, ուր մեծ ու փոքր ուսանում են։ Ոմանք ուսանում են սղագրութիւն, ոմանք նոր լեզուներ. մի քանի օրիորդներ Հոմերոսն ու Վիրգիլն են ուսումնասիրում լճակի ալեծուփ ափին նստած, հովանաւոր ծառերի տակ. խմբագիրներն ու թղթակիցներն աշխատում են սրահում. կանանցից ոմանք կար են անում կամ գործում, միևնոյն ժամանակ ականջ դնելով օրագիրները և թեթև նորավէպեր, որ կարդում են տղաները։ Տպող մեքենան գործում է եռանդագին։ Մտաւոր պարապմունքին հետևում են մարմնամարզը, խաղերը, զբօսանքը, նաւով լճակի վրայ շրջելը և այլն։ Եւ այսպէս կեանքը եռ է գալիս այստեղ, թարմ, առողջ և բովանդակալից կեանք։ Երեկոյեան իննը ժամին ամեն ինչ խաղաղում է ամարանոցում։ Ամենքը միասին երգում են երեկոյեան աղօթքը և իրենց վրանները բաշւում։

Հիանալի է կեանքը Բրըչբէյ ամարանոցում։ Ամարանոցում ռամկավարական, պարզ, բարեպաշտ և գործունեայ ոգին շատերին է գրաւում գէթ մի օրով գալու այստեղ և տեսնելու այս փոքրիկ հասարակապետութիւնը։ Բայց ես երկար կանգ առնել չեմ կարող։ Սակայն մի կէտ զանց առնել չեմ կարող այս ամարանոցի կեանքից—այդ կիրակի երեկոյեան աղօթքն է լճակի երեսին։

Ամեն կիրակի օր ճաշից առաջ կանոնաւոր ժամասացութիւն է լինում ամարանոցում, ցուրտ եղանակին սրահում, պարզ օրերին դուրսը, լճակի ափին, մի ստուերախիտ տեղ, որ ամարանոցի լեզուով կոչւում է մատուռ (chapel)։ Կիրակի երեկոյեան ընթրիքից յետոյ, որ տեղի ունի 6 ժամին, նաւակներով դիմում ենք լճակի մէջ տեղը։ Գալիս են նաև մերձաւոր ամարանոցներից սարուորները։ Տասը, տասնհինգ նաւակ շարւում են կողք կողքի։ Լիճը խաղաղ է. նրա մաքուր կապոյտ ջրերի մէջ ցոլանում են մըտնող արևի վերջին շողերը։ Լճի ափերին խիտ անտառ է։ Անտառի կանաչը հետզհետէ մուգ գոյն է ստանում։ Երեք գոյն կայ միայն. ներքև՝ կապոյտ լիճը, երկու կողմը՝ կանաչ անտառը և վերև՝ հրաշափառ վերջալոյսը ծիրանի կարմիրով։ Ոչ մի բան չի խանգարում շրջապատի լռութիւնը։ Այս խորհրդաւոր լռութեան մէջ հնչում են օրհներգները։ 40—50 հոգի երգում են միասին, երկձայն և կանոնաւոր։ Երգին դաշնակցում են երաժշտական գործիները։ Ամեն մինը ընտրում է մի աղօթք, որ ամենքը միասին երգում են։ Որպէս խունկի բուրմունք բարձրանում են միացած ձայները դէպի Բարձրեալը։ Մերձաւոր անտառը կրկնում է արձագանքը։ Բնութիւնն էլ է օրհնում Բարձրեալին։ Անգլիերէն երգերից աւելի հայ երիտասարդի սրտին ազդում է հայերէն «Հրեշտակ զուարթունը», որ երգւում է միաբերան, գործիների մասնակցութեամբ։ Նա երեկոյեան աղօթք է. ուստի երգւում է ամենից վերջը, «բարի գիշերից» առաջ։ Մութը կոխել է։ Հեռուից լսւում է Ջորջվիլ գիւղի ժամի զանգակի ձայնը։ Մայրենի երգի հնչիւնները և զանգակի անուշ ձայնը տանում են հայ երիտասարդի երևակայութիւնը դէպի հեռու արևելք, բարձրագմբէթ Մայր-Աթոռի, ալեւորափառ Ազատ-Սարի և Մայր-Արաքսի պղտոր ջրերի աշխարհը, ուր նա ութ տարի շարունակ լսել է այդ պատուական երգը։

Սեպտեմբերի մէկն է։ Սարուորների մեծ մասը իջել է քաղաք—Բոստոն և շրջակաները։ Շիքագոյի Ցուցահանդէսի թէժ ժամանակն է։ Կրօնների համաշխարհային կոնգրեսն սկսուելու է սեպտեմբերի սկզբներին։

Ճաշից յետոյ փոքրիկ նաւակը պատրաստեցի ճանապարհ ընկնելու համար։ Բեռի Մեաքը—Պրեսբիտերեան քահանայ և պրոֆեսոր—նստում է ղեկի մօտ. ես՝ թիերը ձեռքս՝ առաջ։ Լիճն անհանդարտ է. սեպտեմբերի քամին է փըչում։ Բեռի-Մեաքը հրեց նաւամատոյցին և ափից բաժանուեցանք։ Ափի վրայ շարուած են սակաւաթիւ սարուորներ և փոքրիկ Ռեյլէն, որի պատճառով Շիքագո գնալու սեպտեմբերին մընաց։ Սովորական թաշկինակի շարժումներ, «Sorry» երգը, Good by-ներ և Aufwiedersehen-ներ։ Վերջին անգամ հայեացք ձգեցի վրանիս վրայ, որ դարնւում է անտառի մէջ, երկու մեծ թեղիների տակ, հեռու միւսներից։ Վրանի գլխին դեռ ծածանւում է մի դրօշակ՝ կանաչ, կարմիր, կապոյտ գոյներով։

Մօտակայ Ջորջվիլ գիւղում մնաս բարով ասի Cousin Mac-ին և փոքրիկ շոգենաւը նստայ։ Շոգենաւի անունն է «Լճակի լէդի», Ցիրուի «լէդի», փոքրիկ, սիրուն և յարմարաւոր։ Ուղևորների մեծ մասը սարուորներ են, որ էլնում են իրենց տները։

Լճի հիւսիսային ծայրին գտնւում է Մէգոգ—Magog—փոքրիկ քաղաքը, Քանադայի հողում։ Բնակիչները մեծ մասով կաթոլիկ ֆրանսացիներ են։ Փողոցներում և երկաթուղու կայարաններում ցուցանակները գրուած են առաջ անգլիերէն, ապա ֆրանսերէն, որովհետև թէև վարչութիւնն անգլիական, բայց ֆրանսացիներն իշխող տարր են կազմում Քուէբէկի նահանգի մէջ։ Երկաթուղու ծառայողները պարտաւոր են իմանալ անգլիերէնի հետ նաև ֆրանսերէն։

Առաջին կարգի ուղետոմս եմ առնում, բայց առաջին կլասում տեղ չըկայ։ Նստում եմ երկրորդում. ինձ հետ նաև ուրիշ շատեր, կանայք, աղամարդիկ։ Երկու կլասները քիչ տարբերութիւն ունին իրարից։ Նոյն կահաւորութիւնը և քիչ տարբեր գին։ Բայց երկրորդում ազատ է ամեն ոք ծխելու. ուստի մինչև Մոնրէօլ ծուխ կուլ տուինք։ Ինչպէս յայտնի է, Ամերիկայում միայն առաջին կլաս ունին երկաթուղիները։ Երկրորդ կլասով շատ քչերն են ճամբորդում։ Նրանով գնում են սովորաբար Ֆրանսացիները և նեգրերը։

աշխարհին և նրա օպերաները ներկայացնում են ամեն տեղ, ուր երաժշտական բեմ կայ։ Ո՞վ յայտնի չէ նրա «Ֆաուստը», որի նման տարածուած դժուար թէ մի ուրիշ օպերա լինի։ Գունոյի միւս օպերաները «Ռոմէօ և Ջիւլիետը», «Ֆիլեմոն և Բաւկիդան» Ֆրանսիայից դուրս քիչ են յայտնի, բայց այդ օպերաներն էլ մեծ արժանիքներ ունին։ Աւելի յայտնի են Գունոյի՝ դաշնամուրի վրայ նուագելու երաժշտական փոքրիկ աշխատութիւնները, որոնք ինքնուրոյն և խիստ ախորժալուր են։

Գունոն դեռ պատանի էր, որ սիրեց երաժշտութիւնը, և այդ ժամանակից արդէն յաճախում էր Պարիզի կոնսերվատորիան։ Հազիւ նա լրացրել էր քսան տարին (1837 թ.), երբ ստացաւ երաժըշտագէտի մեծ մրցանակ։ Գունոն այնուհետև սկսեց կատարելագործուել պետութեան հաշուով և ուղևորուեց Հռոմ։ Այստեղ նա եռանդով սկսեց ուսումնասիրել իտալական հին երաժշտութիւնը, գլխաւորապէս եկեղեցականը, որ նա սաստիկ սիրում էր։ «Ֆաուստի» ապագայ հեղինակն Իտալիայում մնաց չորս տարի, յետոյ վերադարձաւ Պարիզ և գրեթէ անմիջապէս երաժշտութեան ուսուչ նշանակուեց «Missions étrangères» եկեղեցում։ Վեց տարի շարունակ Գունոն վարում էր այդ պաշտօնը և այն ժամանակ գրեց մի քանի երաժշտական եկեղեցական երգեր։ Այնուհետև նա, կրօնականից քիչ-քիչ աշխարհայինին դառնալով, սկսեց օպերաներ գրել։ Բայց այդ ասպարիզում նրա առաջին քայլն անաջող էր. նրա «Սաֆօ» օպերան ներկայացրին «Grand opera» թատրոնում 1851 թուին, բայց շատով էլ հանեցին ռեպերտուարից անյաջողութիւն կրելու պատճառով։ Դրանից ութ տարի յետոյ նոյն թատրոնի բեմի վրայ հանդէս եկաւ Գունոյի «Ֆաուստը», որ անսպասելի աջողութիւն ունեցաւ և ընդմիշտ անմահացրեց իւր հեղինակի անունը, նրան առաջնակարգ երաժըշտագէտների շարքը դասելով։

Գունոն վախճանուեց 75 տարեկան հասակում, կաթուածահար լինելով։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐԴԱՇԷՆ (Նուխու գաւառ), 29 սեպտեմբերի.—Պտղաբերութիւնն ու բերքերն առհասարակ առատ են Վարդաշէնում. նշանաւոր են Վարդաշէնի ընկոյզն ու կաղինը (ֆնդուղ), տանձն ու խնձորը, չիրամն ու բաժմը, չաղանակըն ու տեսակ-տեսակ կանաչեղէնները։ Բնութեան այդ առատութեան մէջ գիւղացիներն էլ, կարելի է ասել, երջանիկ ապրում, աւելի ճիշտ՝ երջանիկ են ապրել։

Բնակիչները չորս տարբեր ազգերից են կազմուած,—հայ (հայադաւան), ուտի (յունադաւան), հրէայ և թուրք (պարսիկ, տաճիկ և լեզգիներ). թէ քանակութեամբ և թէ զարգացմամբ ընդհանրապէս տիրապետող են հայերը։

Բայց ինչ վերաբերում է վաճառականութեանը, փող աշխատելուն, դրանցից ոչ մէկը հասնել կարող չէ հրէաներին. պէտք է միայն տեսնել ու հաւատալ. 3 րուբլի դրամագլխով հրէան մի քանի տարուայ մէջ համ 100 ր. է յետ դըցում, համ մի էշ ձեռք բերում, համ էլ էլի 3 ր. դրամագլուխը իւր տեղը բերում։ Մի էշ, մի քանի՝ բազմաթիւ տեղերից ու տասնեակ գոյներով կարկըտած տոպրակներ, երկու հունի կոտալ, մի փայտէ կշեռք—ահա հրէայ վաճառականի հարստութիւնը, որ բարձած էշի վրայ նա պտտում է տնից տուն, փողոցից փողոց ու գրուանքան 3 կոպէկով առած չամիչը 12-ով ծախում, վերջն էլ այնպէս դուրս բերում, որ իսկապէս ոչ թէ 9 կ. է աշխատում 1 գրուանքի մէջ, այլ 19-ը։ Հրէաներն ընկնում են գիւղի արևմտեան ծայրում, բոլորովին շատ քրիստոնեաներից։ Մահմեդականները գիւղի հիւսիսային ծայրումն են։ Կեանք և կենդանութիւն է տիրում Վարդաշէնում միշտ. նա վաճառաշահ գիւղ է. տարին 3—4 հարիւր հազարից աւելի առևտուր է լինում գիւղացիների ձեռքով։ Վարդաշէնում կան մետաքսի չորս գործարան և երեք մանարան։ Գործարանները բանում են շոգիով։ Վարդաշէնցին իւր ցորենն ու գարին, բոսդն ու դարմանը, բրինձն ու կորեկը հաւաքելուց ու ամբարելուց յետոյ, մտնում է այդ գործարանները և ամսական 15—40 ր. ռոճիկ առնելով, իւր ամբողջ տարուայ ապրուստը ապահովում։ 8—9 տարեկան երեխայից սկսած մինչև 60—70 տարեկան ծերունին կարող է պաշտօն գտնել այդ գործարաններում և մանարաններում։ Այդ տեսակ գործարաններ և մանարաններ շատ կան Նուխում։

Նուխում մանարաններում բանում են կանայք, և աղջիկերք, Վարդաշէնում դեռ այդ սովորութիւնը չի մտել, կանանց և աղջկանց այդտեղ փոխարինում են դեռահաս պատանիք։ Մանարաններում նուրբ աշխատանք է հարկաւոր. ընքոյշ աբրեշումէ թելերին մշակի կոշտ ձեռքերը սազ չեն գալ, ձեռնտու չէ։

8 գործարանները մ օրեկան հարիւրաւոր բանուորներ են սնում. գիւղացիները գոհ են գործարանատէրերից, բացառութեամբ միայն մէկից, որին ատելով ատում են և որից խորշելով խորշում։ Վարդաշէնում կան և այլ տեսակ գործարաններ տասնեակներով, ինչպէս են՝ կրմինդրի, աղիսի և կաւէ ամանեղէնների («տիւլիւպ»), կաշուի դարաղ) և այլն։ Կան տասնեակ ջրաղացներ, ջրի դնդեր, աւելացրէք սըրանց վրայ և Վարդաշէնի ընդարձակ այգիները և տեսէք ահա թէ որքան եկամտի աղբիւր ունի սիրուն Վարդաշէնը։ Տնտեսապէս այսպէս ապահովուած գիւղացիներից անկասկած մենք շատ բան կարող ենք պահանջել. արդ՝ ինչ ունին վարդաշէնցիք իրենց հոգու և մտքի սնունդի համար. նոյնպէս ապահով վարդաշէնցին արդեօք ապահո՞վ է բարոյապէս,—այդ կըտեսնենք։

Հայ-Եղբայր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ «ԽԱՂԱՂԱՍԷՐՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ» ՀՐԱՒԷՐԸ

Գերմանիայում նոր կազմակերպուել է «Խաղաղասէրների միութիւն»։ Այդպիսի միութիւններ արդէն գոյութիւն ունին եւրոպական առաջնակարգ պետութիւնների մէջ։ Իւր անդամների շատութեամբ ամենաընդարձակն է Անգլիայի «Խաղաղասէրների միութիւնը», որին անդամ են և այլ ազգութիւնների խաղաղասէրներ, և այդ ստուարանդամ միութիւնը զանազան ժամանակներում մի քանի նշանաւոր կեդրոններում կազմել է համագումարներ, ուր արծարծել և քննել են ընդհանուր խաղաղութեան, միջազգային միջնորդ դատարաններ հիմնելու, պատերազմը վերջացնելու, Եւրոպայում ընդհանուր զինաթափ անելու վերաբերմամբ խնդիրներ։ Քանի մարդկութիւնն առաջադիմում է, քանի մարդասիրական զգացմունքները խոր արմատ են բռնում կուլտուրապէս զարգացող մարդկութեան սրտում, քանի ընդհանուր մարդկային վսեմ գաղափարներն ընդարձակ ծաւալ և ընդունելութիւն են գտնում բոլոր առաջադիմող ազգերի մէջ, նոյնքան շատանում է խաղաղասէրների թիւը և ազգերի պատերազմական, աշխարհակալական ձըգտումը տեղի է տալիս խաղաղասիրութեան վսեմ զգացմունքին։

Եւ ահա Գերմանիայում էլ կազմակերպուում է խաղաղութիւն ցանկացողների միութիւն, որին կազմակերպողների՝ սկզբնական անդամների թւում երևում են ականաւոր և համաշխարհային հռչակ ստացած անձնաւորութիւններ, ինչպիսիք են Ֆրիդրիխ Շպիլհագէն, պրոֆեսոր Վիլհելմ Ֆերստեր, դոկտոր Մորից Բրոշ, գրաֆ Ա. ֆոն-Բոտմեր և այլն։

Գերմանիայում կազմուող խաղաղասէրների այս նոր միութիւնը հրատարակել է մի հրաւէր «գերմանական ազգին» ուղղած։ Առաջ ենք բերում այդ հրաւէրը, որ տպագրուած է գերմանական լրագիրների մեծամասնութեան մէջ.

«Խաղաղութեան ձայներ են լսւում թէ միապետների գահի վրայից և թէ պարլամենտների ամբիոններից։ Ոչ մի ազգ պատերազմ չի ցանկանում։ Ոչ մի կառավարութիւն չի կարող հանգիստ կերպով իւր վրայ պատասխանատուութիւն առնել այն բոլոր սարսափելի հետևանքների մասին, որ կարող է ունենալ պատերազմը, եթէ ծագելու լինի այն ներկայ ժամանակում. սակայն ոչ միայն զօրեղ է դէպի խաղաղութիւնն եղած ձգտումը, այլ զօրեղ է և՛ պատերազմի երկիւղը։ Բոլոր պետութիւնների մէջ հասարակութիւնների այդ անտանելի դրութեանը վերջ տալու համար վերջին տասն տարիների ընթացքում կազմւում են «խաղաղասէրների միութիւններ», որոնց անդամների թիւը տարէ ցտարի բազմանում է և արդէն ներկայումս հազարների է հասնում։

«Միայն Գերմանիան է, որ թէպէտև միշտ առաջին նախանձախնդիրն և ախոյեանն է հանդիսացած եղել գաղափարական ձգտումներ պաշտպանելու և իրագործելու գործում,—միայն նա այդ բանի մէջ յետ է մնացել։ Ի հարկէ, մեր հայրենակիցների միջից անհատներ մասնակցել են և մասնակցում են պարբերաբար տեղի ունեցող խաղաղասէրների համագումարներին, որոնք կայացել են զանազան երկիրներում, բայց ժողովրդի ստուար մեծամասնութիւնը, համարեա գերմանական ամբողջ ազգը մի կողմն է քաշուած, հեռու է կանգնած այդ գործից. այս ինչ խաղաղասէրների միութիւններն արդէն սկսել են իրենց բարերար ազդեցութիւնն ունենալ ազգերի փոխադարձ յարաբերութիւնների վրայ։ Նման միութեան բացակայութիւնը Գերմանիայում իրաւունք է տալիս մըտածել, որ գերմանական ազգն աւելի պակաս խաղաղասէր է, քան թէ միւս ազգերը. որպէս զի ցոյց տանք, թէ ո՛ր աստիճանի անիրաւացի է այդ կարծիքը, մենք գերմանական պետութեան մայրաքաղաքում հիմնեցինք «Խաղաղասէրների ընկերութիւն»։ Սա կլինի այնպիսի կեդրոն, ուր կըմիանան, կըհաւաքուեն նրանք, որոնք թանկ են գնահատում ընդհանրութեան բարօրութիւնը, որոնք ցանկանում են, որ պետութիւնների մէջ ծագած բոլոր տարաձայնութիւնները և թիւրիմացութիւնները վըճռուէին միջազգային միջնորդ դատարանով։ Եւ այդ բանից ոչ մի վնաս չեն կրիլ ոչ պետութիւնների անկախութիւնն ու ինքնուրոյնութիւնը և ոչ նըրանց մէջ գոյութիւն ունեցող կառավարչական ձևը։ Թէ՛ մեր նպատակը չի կարող անիրագործելի համարուել և թէ՛ այն ի վնաս չէ իւրաքանչիւր անկախ պետութեան արժանապատուութեան,—այդ արդէն երևում է նրանից, որ միջազգային միջնորդ դատարանների ձեռքով վճռուող հարցերի թիւը տարէ ցտարի աւելանում է։ Մենք կըձգտենք մեր նպատակին՝ ունենալով մեր ձեռքում գործնական միջոցներ. այդ միջոցներից առաջինն և ամենազօրեղը հասարակաց կարծիքն է։ Եթէ «Խաղաղասէրների միութեան» անդամների թիւն այնքան մեծ կլինի, որ նրա կամքի արտայայտութիւնը կլինի միևնոյն ժամանակ և՛ ազգերի կամքի արտայայտութիւն, այն ժամանակ ոչ մի պետութիւն հնարաւորութիւն չի ունենայ պատերազմ յայտարարել, այն ժամանակ, և միայն այն ժամանակ, կ'անյայտանայ պատերազմի այն երկիւղը, որ հարկադրում է պետութիւններին ժողովել սոսկալի բազմութեամբ զէնք ի ձեռին պատրաստ մարդիկ, այն ժամանակ կ'անյայտանայ այն երկիւղը, որ ծանրացած է ամբողջ Եւրոպայի սրտի վրայ։ Ուստի մենք սրբանով դիմում ենք մեր հայրենակից բոլոր սրտից և կամենալ, ինչ կուսակցութեան էլ որ նրանք պատկանելիս լինին, և խնդրում յայտնել իրենց համակրութիւնը դէպի խաղաղութիւնը, անդամ գրուելով մեր ընկերութեան, և մեզ աջակցել այն նպատակների իրագործման, որոնք իրենց նպատակ ունին սրբել մեր հայրենիքի բարօրութիւնը, նոյնպէս և ընդհանուր մարդկութեան բարօրութիւնը։

Այս հրաւէրի տակ ստորագրել են «Խաղաղասէրների միութեան» կոմիտէ հիմնադիր-անդամները, որոնցից մի երկուսի անունը վերևում յիշեցինք։

Մոնտրէօլի կայարանը հասած չհասած՝ մեր «ամարանոցի-ծաղկի»՝ երիտասարդ պրոֆեսոր Նէվէլ Նորտոն Էվէնսի ազնուաբեր դէմքը տեսայ։ Ախոյ ու առաջ խօսակցութիւնն, ի հարկէ, Բըրչըէյի մասին էր, որ նա թողել էր չորս օր առաջ։ Այնուհետև արծարծուեցան Մոնտրէօլի յիշատակները։

Օրական երկու գնացք է գնում Մոնտրէօլից Շիքագո, յատուկ ցուցահանդէսի այցելողների համար։ Իսկ Բոստոնից գնում է օրական եօթը գնացք յատուկ Շիքագո։ Մնաս բարով ենք անում Cousin-Նէվիլի հետ և, թերևս յաւիտեան, բաժանւում իրարից։ Մթնադիշեր է. հեռւում մթին է տալիս Mount Royal-ը Արքայական Սարը, որի ստորոտում անց եմ կացրել ամբողջ երեք շաբաթ անցեալ յունիսին։ Լսւում է շոգենաւի սուլոցը սուրբ Լաւրենտիոսի գետի վրայ.—Եւրոպայից նոր է հասել և խարիսխ է ձգում Նոր Աշխարհի ափին։

Հազար անգլ. մղոնի չափ ճանապարհ ունիմ մինչև Շիքագո. ամբողջ քառասնից ժամ։ Կարդալ անհնար է. բաւական լոյս չկայ։ Քնել նոյնպէս անհնար է գրեթէ։ Ամբողջ կառատունակը, որ մեր երկրի չորսի մեծութիւն ունի, լի է ճամբորդներով. ազատ տեղ չկայ։ Կողքիս նստած է մի կին երկու մանուկներով։ Ծծկերը լալիս է, ինչ որ բան է ուզում, որ մայրը չի կարող ճարել այստեղ։ Մի ուրիշ երեխայ նրա ձայնից զարթել է և եկել խրատում է, որ լռի։ Բայց ինչ խրատ կլսի նա։ Ուղևորները քնած են կամ թմրած։ Բաւական ձանձրալի է։

Աւելի հետաքրքիր և աշխոյժ է անցնում ժամանակը ցերեկը։ Մարդ ես տեսնում, ասում և խօսում հետը, կամ կարող ես կարդալ։ Կողքիս, բազմոցի վրայ նստած են երկու պառաւ կոյսեր։ Մէկը մայրապետ է Կանադայի կուսանոցներից մինի։ Նրանք գնում են Շիքագո մասնակցելու այն մի շարք համագումարներին, որոնք գումարուելու են կաթոլիկ եկեղեցու ժամանակակից պահանջները քննելու և նրա պայծառութեան միջոցների մասին խորհելու համար։ Ինչպէս աչալուրջ է կաթոլիկ եկեղեցականութիւնը և իմաստուն իւր շահերը պաշտպանելու համար։ Նա գիտէ ժողովրդին միշտ կապած պահել եկեղեցու հետ. գիտէ ուսումնասիրել ժամանակը և գնալ նրա հետ։ Կոյսերը համեստ են, բայց չեն քաշւում զրոյց անել ուղևորների հետ և ծիծաղել։ Նրանք կար են անում, իսկ երբ յոգնում են, աղօթագիրքն են կարդում կամ համրիչի վրայ Հայր մեր և Ավէ Մարիա համրում։

Կէս գիշերից անց էր, որ Շիքագո հասանք։ Քաղաքին միանգամայն անծանօթ՝ իջայ առաջին պատահած կայարանում։ Շիքագոն երկաթուղիների ամենամեծ կեդրոնն է Միացեալ-Նահանգներում։ Քսան գծից երկաթուղու գիծ է մտնում քաղաքը։ Ամեն մի գիծ բազմաթիւ կայարաններ ունի։ Մի հիւրանոցի հասցէ ունէի, բայց այս գիշերուայ մէջին ո՞ւր գտնէի։ Այս մտքի մէջ էի, որ հիւրանոցի մի գործակալ մօտեցաւ և առաջարկեց իւր ծառայութիւնը անգլիերէն, գերմաներէն, ֆրանսերէն, ռուսերէն իրար ետևից։ Նա ասաց, որ իւր հիւրանոցն աշխարհիս ամենալաւ հիւրանոցն է, որ էժան է և այլն և այլն։ Ամենավատն էլ լինէր, պարտաւոր էի համաձայնուել, գոնէ մի գիշերուայ համար։ Լեզուագէտ ծառան յայտնեց, որ ռուսաց Լեհաստանից է։ Մինչև հիւրանոց հասնելը նա անթիւ հարցեր տուեց ազգութեանս, հայրենիքիս, պաշտօնիս, Շիքագոյում քանի օր մնալուս վերաբերմամբ։

Բըրչըէյ ամարանոց և Շիքագո. այս երկու ծայրեր են։ Մինը անդորր հովուերգական անկիւն, միւսը Նոր Բաբելոն, ուր ականջդ խլանում է փողոցի շոգեկառքերի և էլէքտրական կառքերի աղմուկից ու անցուդարձից։ Փողոցներում վխտում են էլէքտրական քարշակները։ Մի քանի տեղ երկաթեայ երկաթուղու գիծ է անցնում։ Փողոցի վրայով էլէքտրական, ապա շոգեշարժ, որ անցնում է փողոցի երկարութեամբ բարձրացած գծի վրայով, հաստատած երկաթի սիւների վրայ։ Այս երկրորդ գծի վրայից կարում անցնում է երրորդ բարձրացրած երկաթուղու գիծը։ Պատահում է, որ վեց գնացքներ միևնոյն ժամանակ կանգնած են նոյն կէտի վըրայ, հաւասար երկաթուղու գծերում։ Եւրոպայում և Ամերիկայում երկաթուղու գծերը միշտ երկուսն են, կողք-կողքի, որպէսզի երկու գնացք միաժամանակ կարող են բանել, հակառակ ուղղութեամբ։ Այս մեծ դիւրութիւն է տալիս կառքերի արագ և անընդհատ շարժման։

Կիրակի է։ Ցուցահանդէսը թէև բաց է, բայց միայն արտաքին դռները. բուն շինութիւնները փակ են։ Գնում եմ եկեղեցի, լսելու համար Միստր Ջոնսին, որ «Unity» թերթի խմբագիրն է և նշանաւոր քարոզիչ։ Փողոցներով անցնել դժուար է, այնքան ժամօրներ կան։ Ինչքան մեծ նշան գտածուր, որ յանկարծ լսեցի մի ձայն, որ կանչում էր.

—Cousin Օհաննէս!

Կանչողը մեր ուղևորներից մէկն էր, Միսս Շոֆնէր, մօր հետ միասին։

Բնական է, որքան ուրախ եղայ, օտար քաղաքում ծանօթներ գտնելով։

—Ո՞ւր էք գնում։

—Ես գնում եմ ունիտերիան եկեղեցի, իսկ մայրս մեթոդիստ է, գնում է նոյն եկեղեցին, որ միւս փողոցումն է։

—Հապա ո՞ւր է ձեր հայրը։

—Նա էպիսկոպոսական է, գնացել է իւր ծխական եկեղեցին։

Մայրը մեթոդիստ, հայրը էպիսկոպոսական, աղջիկը ունիտերիան, բայց երեքն էլ լաւ ամերիկեան քաղաքացիներ։ Այսպէս է Ամերիկայում։

Միստր Ջոնսի քարոզի բնաբանն էր «Դատարկ եկեղեցին»։ Բայց եկեղեցին դատարկ չէր։ Նա ասաց, որ սիրում է լինել եկեղեցում, ժամասացութիւնից առաջ, երբ մարդ չկայ, երբ նա մենակ է իւր Աստուծոյ հետ, երբ կեղծիքի կարիք չկայ, որովհետև մենակ մարդու համար չի կեղծում։ Ինչո՞ւ կան մարդիկ եկեղեցում, են ընտրել ցոյցի համար միայն։

Ց. Խաչատրեան։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Գերմանիայում տեղի ունեցող հողատէրերի ռուս-գերմանական առևտրական դաշնակցութեան դէմ հակացոյցերը, խորհուրդները և որոշումներն սկսել են ազդել մամուլի վրայ։ Շատ լրագիրներ վտանգաւոր են գտնում այդ հակացոյցերը, որոնք կարող են ներգործութիւն ունենալ ռուս-գերմանական առևտրական համաձայնութիւն կայացնելու համար տեղի ունեցող կոնֆերենցիայի վրայ, որի նիստերը մինչև այժմ խաղաղ են ընթանում։ Սակայն հողատէրերի այդ յուզումները նոյն իսկ կառավարութեանն էլ դժուար դրութեան մէջ կդնեն, որովհետև կարող է պատահել, որ րայխստագը մերժի ռուս-գերմանական առևտրական դաշնագիրը։ Դրա վրայ էլ կաւելանայ այն դժուարութիւնը, որ մինչև այժմ կառավարութիւնը համաձայնութիւն չի կայացրել րայխստագի հետ երկիրը պահպանելու համար փոխարինութիւններ անելու վերաբերմամբ։ Ուստի գերմանական մի քանի լրագիրներ աւելի շուտ ցանկանում են, որ աւելի լաւ է ռուս-գերմանական առևտրական ներկայացուցիչների միջև համաձայնութիւն չկայանայ, քան թէ ռուս-գերմանական առևտրական դաշնագիրը մերժուի րայխստագի կողմից, որովհետև կառավարութիւնը վերոյիշեալ երկու հարցումն էլ իրեն շատ դժուար կացութեան մէջ կլինի դրած։

—Անգլիական նաւատորմին Տարենտոյում տրած ընդունելութեան մասին, ի միջի այլոց, Հռոմից հետևեալն է հեռագրուած. «Անգլիական նաւատորմին ընդառաջեց իտալական «Italia» նաւը։ Սովորական ողջոյնից յետոյ անգլիական նաւախումբը մտաւ ծովածոցը և խարիսխ ձգեց։ Ծովի ափին կանգնեցրած էր ծովային հետևակ զօրքի մի գունդ, որի երաժշտական խումբն սկսեց նուագել իտալական և բրիտանական ազգային օրհներգները։ Բանուորների միութիւնը և ափի մօտ հաւաքուած խառն բազմութիւնը, որի մէջ օտար երկրացիներ էլ կային, ոգևորուած ցոյցեր արեցին անգլիական ծովագնացներին։ Փոխ-ծովակալներ Տուրի և Կորսի այցելեցին լորդ Սէյմուրին ծովակալական նաւի վրայ։ Երեկոյեան ծովակալ Սէյմուրը իր շատ օֆիցերների հետ ափ իջաւ և այցելեց պրինցեսս Իգարեկյի ժողովարանը (կլուբ)։ Քաղաքում անսովոր ոգևորութիւն էր տիրում։ Լրագիրները ոգևորուած կերպով շնորհաւորում են անգլիական ծովագնացների գալուստը և մասնացոյց են անում, որ այդ այցելութիւնը խաղաղութեան ամենամեծ գրաւականն է»։ Անգլիական ծովագնացների պատուին փառաւոր ճաշ է տրուել և կերտահանդէս կազմուել։ Նաւերը և քաղաքը շքեղ կերպով լուսաւորուած էին։

—Սպանիայում անիշխանականները խիստ եռանդով գործում են և օր աւուր բազմանում, գլխաւորապէս Մալագում, Կադիքսում և Խերեսում։ Խերեսում գտնուած են ուժանակի շատ ռումբեր։ Այդ քաղաքների ժողովուրդը տագնապի մէջ է. երկիւղ են կրում ամբողջ քաղաքը յօդս ցնդեցնելուց։

—Սերբիայի մինիստր-նախագահ Դոկիչը մահամերձ հիւանդ է. լրագիրներն ասում են, որ նրա լեզուն վայր է ընկել։ Այժմ Բելգրադում խօսում են, թէ ով կը լինի Դոկիչի յաջորդը։ Հաւանական են համարում, որ այժմեան ֆինանսների մինիստր Վույչը կը յաջորդէ Դոկիչին։ Վույչի համար աշխատում է նախկին Թագաւոր և այժմեան Ալէքսանդր Թագաւորի հայր Միլանը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պրոֆեսոր Հէյնձէ Չիկագոյից Գերմանիա վերադառնալիս «Զաալէ» շոգենաւի վրայ ընկել է սանդուղքից և գլխի վրայ խեղումներ է ստացել։ Բերլին հասնելուց յետ, պրոֆեսորին հիւանդանոց են տարել։

—

Չիկագոյի ցուցահանդէսի այցելուների թիւը հոկտեմբերի 10-ին, տօնի պատճառով, եղել է 750,000. տեղը սաստիկ նեղուածք լինելով երեք հոգի ջարդուած են և 150 հոգի խեղումներ ստացած։ Պարիզի 1889 թուի ցուցահանդէսն այցելողների ամենամեծ թիւն եղել է 397,150.

—

Մահուան դարի հոբելեան. — 1894 թուին լրանում է Ֆրանսիայի նշանաւոր քիմիկոս Լաւուազէի մահուան պատժի հարիւրամեակը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 հոկտեմբերի.—Հրաման է հրատարակուած պահեստի հետևակ զօրաբանակների 15 վարչութիւններ կազմակերպելու և զօրացնելու բոլոր պահեստի զօրագնդերի շտաբներն Եւրոպական Ռուսիայում և Կովկասում։

ՊԱՐԻԶ.—Ջրախաղը փառահեղ էր. ժողովուրդը, 30,000 հոգի, յաճախ ծափահարում էր. ահագին ամբոխը ցոյցեր արեց հասարակապետութեան նախագահ Կարնոյին, ռուս և ֆրանսիական սպաներին։ Աւելանը ներկայ էր Մարսեան դաշտում սենատական Ռանկի նախագահութեամբ 3,584 հոգու համար պատրաստուած բանկետին և Սենայի վրայ սարքուած հրաշալի տօնախմբութեանը։ Երեկ հրավառութիւն էր սարքուած Տրոկադերոյում կէս գիշերին. փողոցներն եռում էին ժողովրդով. փողոցների խաչաձև կազմող տեղերում պարեր էին սարքում. «Cercle Militaire»-ում գեներալ Սոսիէն ռուս սպաներին հիւրասիրեց ընթրիքով։

ԼՈՆԴՈՆ.—«Times»-ի Տուլոնի թղթակիցը յիշեցնում է, որ բրիտանական և ռուսական նաւատորմերի միջև 15-րդ դարից սկսած մինչև Նաւարեան ճակատամարտը զինակցական եղբայրութիւն և փոխադարձ համակրութիւններ են եղել. Թղթակիցն եռանդով խօսում է ռուսական նաւախմբի Պորտսմութ այցելելու օգտին, որ, անկասկած, բուժիչ ներգործութիւն կունենայ, հեռացնելով ազգային նախապաշարումները։ Կասկած չկայ, որ ռուսներին սրտագին ընդունելութիւն ցոյց կտրուի։

ՊԱՐԻԶ, 13 հոկտեմբերի. — Լոտարինգիայի կողմից եկած պատգամաւորութիւններն այսօր «Cercle Militaire»-ում մատուցին Աւելանին ընծաներ, որոնք հաւաքուած են Լոտարինգիայում։ Մեզիերն արտայայտեց Աւելանին Լոտարինգիայի պատգամաւորների համակրական զգացմունքը դէպի ռուսաց նաւախումբն, զգացմունքներ, որ նոյն են ինչ որ Պարիզի բնակիչների զգացմունքները։ Մեզիերը խնդրեց Աւելանին ընդունել Լոտարինգիայի արուեստագէտների պատրաստած գեղարուեստական այդ առարկաները։ Այդ ընծաները կըյիշեցնեն ռուս սպաներին, որ իրենք ունին հաւատարիմ և յուսալի բարեկամներ Լոտարինգիայի 1800 համայնքների մէջ։

Նախագահ Կարնոն հաղորդեց ծովապետ Աւելանին, որ ուրբաթ օրն ինքը նախագահը այցելելու է Տուլոն։

ԲՈՐՍԱ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 հոկտեմբերի

—

Մուրհ. կուրսը, 3 ամսով, Լոնդոնում 10 ֆ.		
ստեր. համար	95,10	սակ.
Բերլին 100 մար.	46,67½	—
Պարիզ 100 ֆրանկի.	37,85	սակ.
Մուրհ. կուրսի. տրամադրութիւնը խաղաղ է.		
Նոր կոպած պոլուիմ. 7,64 առք.	7,67	ծախ.
Մաքսային կուրսը (100 մետաղ րուբլուն)...	152¾ — 153¾	—
Արծաթը		—
Բորսային զեղջը	5 մինչև 6½%	
Պետ. բան. Ա. հրատ. 5% տոմս.	102	սակ.
2-րդ	102	առք.
1883 թուի 6% ոսկեայ րենտը.	155½	սակ.
1884 թուի 5% — —	162	առք.
Արևելեան փոխ. 100 և 1000 րուբլիանոց 5% Բ. հրատ.	100⅝	—
,, ,, ,, Գ. հրատ.	101½	սակ.
1864 թ. Ա. Ներքին փոխառու. վիճակահան. 5% տոմսեր	241¾	—
1866 թ. Բ. ,, ,,	216½	առք.
Արքունի երկաթուղային րենտը	—	—
Ներքին փոխառ. 4% I սերիան	93¼	—
,, ,, II սերիան	93⅜	սակ.
,, ,, III սերիան	93⅜	—
,, ,, IV սերիան	93⅜	—
4½% երկաթուղ. փոխ I հրատ.	99⅜	—
,, II հրատ. 1893 թ. 99⅛ առք.	99	առք.
Ազն. կալ. բան. 5% գրաւաթ.	100¼	—
,, ,, 4½% —	98½	սակ
Արք. ազն. կալ. բան. 5% վիճակահանութեան տոմսերը	192½	—
4½% շինական հող. բանկի վկայ.	98¾	—
Հարաւ-Արևմտեան երկաթուղ.		
4% օբլիգացիան	92½	ծախ.
Մոսկուա-Ռիազանի	91	առք.
Ռիազան-Ուրալի	98⅜	սակ.
Կուրսկ—Կիևի	98,73	—
Կալ. փոխադ. վարկի ընկեր.		
4½% ընկեր. գրաւաթղթերը	155¼	—
5%	100½	—
Պետերբուրգի քաղ. վարկի ընկ.		
5% օբլիգացիան	100¼	—
Մոսկուայի	100¼	—
Օդեսայի 5½%	100¼	—
Թիֆլիսի	98¼	ծախ.
Լեհաստանի կալ. բանկի 5% գրաւաթղթերը	100½	—
Խերսոնի Նահանգի կալ. բանկի 5% 5½ գրաւ. թղ. 100⅜ առք.	99½	սակ.
Խարկովի կալ. բանկի 5%	99⅜	սակ.
Պոլտաւայի	99⅝	ծախ.
Տուլայի	99½	առք.
Կիևի	100	սակ.
Մոսկուայի	100½	ծախ.
Բեսարաբիա—Տաւրիկեան	99½	—
Նիժն.—Սամար.	100	սակ.
Դոնի	99	առք.
Վիլնայի	99½	—
Թիֆլիսի 5% և 6% 100½ և	99	ծախ.
Քութայիսի 100½ և	99	—
Ակցիաների գները	460	սակ.
Միջազգային առևտրական	469	—
,,Արտ. առևտ. ռուս. բանկի	290	—
Վոլգա-Կամայի առևտրակ.	870	ծախ.
Սիբիրի բանկի.	650	առք.
Բեսսարաբ.—Տաւրիկ.	560	ծախ.
Խարկովի կալուածական	480	—
Պետերբ.-Տուլայի	614	—
Պոլտաւայի	593	—
Նիժեգորոդ.-Սամարայի	627	—
Վիլնայի	580	—
Դոնի	715	—
Կիևի	776	—
Մոսկուայի	587	սակ.
1827 թ. կրակից ապահովող ռուսաց ընկերութիւն.	1170	առք.
Հիւսիս. ապահովող ընկ.	264	—
,,Ռոսսիա" ,, ,,	300	սակ.
Ռուսաց Նաւագնացութեան և առևտրի ընկերութիւն	690	առք.
,,Կովկաս և Մերկուրի" ընկ	390	—
Ռուս. երկաթ. գլխ. ընկեր.	243	առք.
Մոսկուա-Ռիազանի երկաթ.	464	—
Կուրսկ-Կիևի	379	սակ.
Ուբլինսկ-Բոլոգոյի	81¾	—
Գրեազ-Ցարից.	155¼	—
Հարաւ-Արևմտեան	111¼	—

Բորսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Կովկասեան Կայսերական գիւղատնտեսական ընկերութեան պ. պ. անդամները հրաւիրւում են հերթական ժողովի, որ լինելու է ուրբաթ ժամը 7½-ին։

Պարապմունքի առարկաները.

Ի. Ն. Կլինչենի զեկուցումը գիւղատնտեսական ընկերութեան և գիւղատնտեսների միջև կենդանի կապ հաստատելու խնդրի մասին։

Ներկայ կարող են լինել նաև կողմնակի անձեր։

Երկաթուղի

Թիֆլիսից Բաթում է գնում մարդատար № 2 գնացքը առաւօտեան 9 ժ. 30 ր., և Բաթում հասնում է երեկոյեան 9 ժ. 45 ր.։

Թիֆլիսից Բաթում է գնում № 4 պոստային գնացքը, երեկոյեան 6 ժ. 50 ր., և Բաթում է հասնում առաւօտեան 8 ժ. 15 րոպէին։

Թիֆլիսից Բագու է գնում պոստային № 3 գնացքը՝ ցերեկը ժամը 1-ից 20 ր. անց։

Բաթումից դուրս է գալիս մարդատար № 1 գնացքը առաւօտեան 9 ժ. 45 ր անց, իսկ *Թիֆլիս* է հասնում երեկոյեան ժամը 9-ից 52 ր. անց։

Բաթումից դուրս է գալիս պոստային № 3 գնացքը գիշերուայ ժամը 11-ից 25 ր. անց, իսկ *Թիֆլիս* է հասնում ցերեկը ժամը 12-ին 25 ր. անց։

Բագուից պոստային № 4 գնացքը դուրս է գալիս գիշերուայ ժամը 11-ից 10 ր. անց և Թիֆլիս է հասնում երեկոյեան ժամը 5-ից 50 ր. անց։

Պոստային կառքերի

Երթևեկութիւնը ԹԻՖԼԻՍԻ և ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶԻ միջև մայիսի 1-ից սկսած մինչև նոյեմբ. 1-ը։

—

ԹԻՖԼԻՍԻՑ դուրս է գալիս

Առաւօտեան ժամը 7-ին՝ հինգ հոգու տեղ ունեցող կարետը, գիշերում է Մլեթում և միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկաւկազ։

Առաւօտեան ժամը 9-ին՝ հինգ հոգու տեղ ունեցող կարետը, գիշերում է Պասանաուր կայարանում և միւս օրը երեկոյեան ժամը 10-ին հասնում է Վլադիկաւկազ։

Երեկոյեան ժամը 3-ին՝ վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուսը). առանց գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկաւկազ։

Երեկոյեան ժամը 5-ին՝ վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը առանց գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում է Վլադիկաւկազ։

—

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶԻՑ դուրս է գալիս

Առաւօտեան ժամը 7-ին՝ հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Մլեթում և միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Թիֆլիս։

Առաւօտեան ժամը 9-ին՝ հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Գուդաուրում և միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում է Թիֆլիս։

Երեկոյեան ժամը 3-ին, վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը. առանց ճանապարհին մի տեղ գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Թիֆլիս։

Երեկոյեան ժամը 5-ին, վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը. առանց ճանապարհին մի տեղ գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 8½-ին հասնում է Թիֆլիս։

Շոգենաւեր



Երթևեկութիւնը մայիսի 8-ից սկսած.

ԱՊՐԱՆՔԱԿԻՐ ՄԱՐԴԱՏԱՐ ԳԻԾ

Բաթումից գնում է ուրբաթ օրերը երեկոյեան ժամը 6-ին և հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Բաթում գալիս է հինգշաբթի օրերը, կէսօրուայ մօտերքը։

Փոթից գնում է Օդեսա՝ ուրբաթ օրերը գործերը վերջացնելուց յետոյ։

և Փոթիից գնում է Բաթում՝ հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 9-ին։

Փոթի գալիս է՝ երեքշաբթի օրերը ցերեկը՝ Օդեսայից։

Ապրանքակիր-մարդատար շոգենաւերում ընդունւող II և III կարգի ճանապարհորդները կերակրեղէն չեն ստանում։

—

ԲԱԹՈՒՄԻՑ դուրս է գալիս դէպի ՕԴԵՍՍԱ

Շաբաթ օրը՝ լոյս կիրակի, ժամը 2-ին, շրջանաւոր ընթացքով մտնում է բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրը՝ գիշերուայ 11½-ին, ճեպընթաց նաւը և մտնում է միայն Եալթա Սևաստոպոլ։

Երեքշաբթի օրը՝ գիշերուայ ժամը 2-ին, շրջանաւոր ընթացքով, մտնում է բոլոր նաւահանգիստները։

Հինգշաբթի, ցերեկը ժամը 12-ին, ուղիղ գծով, Նովորոսիյսկի և Կերչի վրայով։

Երկուշաբթի, երեկոյեան ժամը 7-ն, դուրս է գնում դէպի Կ. Պոլիս՝ երկու շաբաթը մի անգամ։

ՕԴԵՍՍԱՅԻՑ գալիս է ԲԱԹՈՒՄ

Ուրբաթ օրերը՝ երեկոյեան, շրջանաւոր ընթացքով, բոլոր նաւահանգիստներն է մտնում։

Ուրբաթ օրերը՝ առաւօտեան, ճեպընթաց Եալթա և Սևաստոպոլ հանդիպելով։

Երկուշաբթի՝ երեկոյեան, շրջանաւոր ընթացքով, մտնում է բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը՝ առաւօտեան, ուղիղ գծով, Նովորոսիյսկի և Կերչի վրայով։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

BATEAUX A VAPEUR FRANCAIS A. PAQUET ET Cie

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„Ն. ՊԱՔԷ եւ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղիղ երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը երկու շաբաթը մի անգամ, յունուարից սկսած և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԷԼ։

Բաթումից Մարսէլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Կ. Պոլիս քաղաքները։

Բաթումից Պարիզ ուղիղ հաղորդակցութեան տոմսակները սովորական զիջումն ունին։

Բաթումից մեկնում է՝

Մոտաւորապէս հոկտ. 20-ին (նոյեմ. 1-ին) «Մինգրելի» ծիրուէն և այդպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրուայ։

Որովհետև ձեռք առնուած կարանտինային միջոցների պատճառով կարելի չէ նախօրօք ճշտիւ որոշել շոգենաւերի Բաթումից մեկնելու օրերը, ուստի այդ մասին տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել հետևեալ գործակալներին։

Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ՓԱՐՆՈՅԻՆ, Նարիշկինսկայա։

Թիֆլիսում—պ. ԲԱՐԵԿԵՆԴԻԱՆԵԱՆԻՆ, Սիօնի փողոց, քարուանսարայ Գէորգ աղայի։

Բագուում—պ. Սամուէլ Դիլդարեանին, Կալիւբակինսկայա հրապարակ։

Նովորոսիյսկում—պ. ԼՈՒԻ ՈՒԵՆՕՅԻՆ։

Չիկագոյի ցուցահանդէսը գնալ ցանկացողները կարող են ստանալ մանրամասն տեղեկութիւններ թէ ճանապարհի ծախքի և թէ Հաւրից շոգենաւի մեկնելու ժամանակի մասին

(262) 20—1

Доз. Цензурою Тифлисъ, 13-го Октября 1893 г. Տպարան և Վիմատ. Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типо-Лит. А. Меликъ-Шахназаріанца, Воронц. Набережн., д. Григорьянъ Арм. Приход. Школы.